

Հայաստանի Հանրապետության պետական
բյուջեից ֆինանսավորվող գիտական և
գիտատեխնիկական գործունեություն
իրականացնող կազմակերպությունների
անձնագրային տվյալների վերլուծության
արդյունքները

Մտորև բերված են տվյալներ ՀՀ գիտության առկա վիճակի, ինչպես նաև առաջարկներ մոտ ապագայում կատարվելիք աշխատանքների մասին: Վերլուծությունը հիմնականում կատարված է ՀՀ բյուջեից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպություններից անձնագրային տվյալների հիման վրա:

Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների բաշխումն ըստ գերատեսչությունների*

1	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	33
2	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	25
3	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	8
4	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	6
5	ՀՀ առողջապահության նախարարություն	8
6	ՀՀ բնապահպանության նախարարություն	5
7	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	3
8	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2
9	ՀՀ մշակույթի նախարարություն	2
10	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	1
11	Այլ	5

* համաձայն անձնագիր ներկայացրած գիտական կազմակերպությունների քանակի

**Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների
բաշխումն ըստ կազմակերպատիրավական ձևերի***

		ՊՈԱԿ	ՓԲԸ	ՊՓԲԸ	ԲԲԸ	ՍՊԸ	ԱԿ
1	ՀՀ գիտությունների ազգային ուսումնեմհու	33	-	-	-	-	-
2	ՀՀ կրթության և գիտության նահաարարություն	18	-	-	-	2	5
3	ՀՀ գյուղատնտեսության նահաարարություն	6	-	2	-	-	-
4	ՀՀ էկոնոմիկայի նահաարարություն	2	3	-	1	-	-
5	ՀՀ առողջապահության նահաարարություն	2	6	-	-	-	-
6	ՀՀ բնապահպանության նահաարարություն	4	-	1	-	-	-
7	ՀՀ քաղաքաշինության նահաարարություն	2	-	-	1	-	-
8	ՀՀ էներգետիկայի և բնական աաշարների նահաարարություն	-	2	-	-	-	-
9	ՀՀ մշակույթի նահաարարություն	2	-	-	-	-	-
10	ՀՀ տարաձքային կառավարման նահաարարություն	1	-	-	-	-	-
11	Այլ	2	1	-	-	2	-

Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների
բաշխումն ըստ մարզերի*

1	Երևան	76
2	Շիրակ	6
3	Կոտայք	4
4	Արագածոտն	3
5	Արմավիր	3
6	Սյունիք	2
7	Արարատ	1
8	Գեղարքունիք	1
9	Տավուշ	1
10	Լոռի	1
11	Վայոց Ձոր	0

**ՀՀ գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության
ֆինանսավորումն ըստ գերատեսչությունների 2008թ.**

Հ/հ	գերատեսչությունը	ֆինանսավորումը բյուջեից (հազ. դրամ)			
		բազային	պայմանագրային	նպատակային	ընդամենը
1	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	2126500.2	545514.0	125000	2797014.2
2	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	780042.4	567223.4	26100	1373365.8
3	ՀՀ առողջապահության նախարարություն	70585.1	51834.8	-	122419.9
4	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	118068.0	92025.5	-	210093.5
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	368770.0	143819.5	-	512589.5
6	այլ	328911.1	55449.0	792200.0	1176560.1
	Ընդամենը**	3792876,8	1455866,2	943300	6192043

** Հաշվի չեն առնված գիտական աստիճանի համար հավելավճարները և գիտական ներուժի վերարտադրման ծախսերը

**Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման
ծավալներն ըստ բնագավառների (2005-2007թթ.)**

(հազ. դրամ)

I	բնագավառը	պայմանագրերի քանակը	հաստիք ների թիվը	ֆինանսավորմ ան ծավալը	աշխատավարձի ֆոնդը		այլ ծախսեր	տնտեսական ծախսեր
					ծավալը	%		
	2	3	4	5	6	7	8	9
1	Մաթեմատիկա, մեխանիկա, ինֆորմատիկա	57	161.5	58032	52907.4	91.2%	2233.2	2891.4
2	Ֆիզիկա	108	488.5	194703.2	160032.6	82.2%	10886.5	23784.1
3	Տեխնիկական գիտություններ	70	205.5	81624.6	67321.8	82.5%	5671.8	8631
4	Քիմիական գիտություններ	43	196	81261.9	64209.9	79.0%	5880	11172
5	Կենսաբանական գիտություններ	85	367.5	148717.8	119737.8	80.5%	8820	20160
6	Երկրի մասին գիտություններ	33	163.5	68101.8	53562.6	78.7%	6826.8	7712.4
7	Հայագիտություն	78	259	111471.4	84848.4	76.1%	12351.4	14271.6
8	Հասարակագիտություն	27	68	26032.8	22276.8	85.6%	816	2940
9	Մանկավարժական գիտություններ	35	48.5	16470.6	15888.6	96.5%	582	-
10	Քաղաքաշինություն, ճարտարապետություն, շինարարություն	50	186	72441.6	60933.6	84.1%	11208	300
11	Բժշկական գիտություններ	58	184.5	65820.6	60442.2	91.8%	2277	3101.4
12	Գյուղատնտեսական գիտություններ	93	281	103708	92055.6	88.8%	6895	4757.4
	Ընդամենը	737	2609.5	1028386.3	854217.3	83.1%	74447.7	99721.3

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ծավալներն ըստ բնագավառների (2008թ.)

(հազ. դրամ)


1	բնագավառը	պայմանագրերի քանակը	հաստիքների թիվը	ֆինանսավորման ծավալը	աշխատավարձի ֆոնդը		այլ ծախսեր	տնտեսական ծախսեր
					Ծավալը	%		
2	3	4	5	6	7	8	9	
1	Մաթեմատիկա, մեխանիկա և ֆորմատիկա	36	166.5	98721.75	94155.75	95.4%	2655	1911
2	Ֆիզիկա	108	405.0	255754.5	229027.5	89.5%	13206	13521
3	Տեխնիկական գիտություններ	53	196.5	116283.75	111120.75	95.6%	4080	1083
4	Քիմիական գիտություններ	54	190.0	117426	108135	92.1%	4512	4779
5	Կենսաբանական գիտություններ	85	330.0	203787	186615	91.6%	7698	9474
6	Երկրի մասին գիտություններ	28	125.0	77170.5	70687.5	91.6%	4080	2403
7	Հայագիտություն	96	265.5	164087.55	151457.55	92.3%	6828	5802
8	Հասարակագիտություն	31	89.5	52260.75	50046.75	95.8%	1335	879
9	Մանկավարժական գիտություններ	31	60.0	34940	34160	97.8%	738	42
10	Քաղաքաշինություն, ճարտարապետություն, շինարարություն	62	122.0	70944	68991	97.2%	1573	380
11	Բժշկական գիտություններ	75	125	93971.25	91328.25	97.2%	2202	441
12	Գյուղատնտեսական գիտություններ	51	239.5	143861.25	135437.25	94.1%	5094	3330
	Ընդամենը	710	2352	1429208.3	1331162.3	93.1%	54001	44045

Միջազգային դրամաշնորհների բաշխումն ըստ գերատեսչությունների

Հ/հ	Գերատեսչությունը	դրամաշնորհների ծավալը (ԱՄՆ դոլար)	%
1	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	1075808	16.2%
2	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2182634	32.8%
3	ՀՀ առողջապահության նախարարություն	2000	0.03%
4	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	93522	1.4%
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2266768	34.1%
6	Այլ	1028256	15.5%
	Ընդամենը	6648988	


ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեությունն իրականացնող գիտությունների դոկտորների և թեկնածուների բաշխումն ըստ գիտության ճյուղերի

գիտությունների թեկնածուներ



- 1 բնական գիտություններ
- 2 տեխնիկական գիտություններ
- 3 բժշկական գիտություններ

գիտությունների դոկտորներ



- 4 գյուղատնտեսական գիտություններ
- 5 հասարակական գիտություններ
- 6 հումանիտար գիտություններ

Հ/հ	Գերատեսչության անվանումը	Դոկտորներ			Թեկնածուներ		
		2005	2006	2007	2005	2006	2007
1	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	288	285	297	924	914	967
2	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	402	430	605	1604	1686	2130
3	ՀՀ առողջապահության նախարարություն	10	11	13	51	52	53
4	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	31	30	28	134	131	132
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	43	43	40	141	145	149
6	Այլ	26	25	24	68	77	79
	Ընդամենը	800	824	1007	2922	3005	3510

Գիտությունների դոկտորների և թեկնածուների տարիքային բաշխումը

	գերատեսչության անվանումը	մինչև 30 տարեկան		31-40 տարեկան		41-50 տարեկան		51-60 տարեկան		61-70 տարեկան		70 տարեկանից բարձր		Միջին տարիքը	
		Դ	Թ	Դ	Թ	Դ	Թ	Դ	Թ	Դ	Թ	Դ	Թ	Դ	Թ
1	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	0	121	2	112	24	176	82	304	114	191	101	148	64.0	52.5
2	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	0	157	20	346	53	282	123	310	127	275	67	98	59.5	48.5
3	ՀՀ առողջապահության նախարարություն	0	5	2	4	0	11	7	20	3	6	3	3	58.5	50.5
4	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	0	4	0	6	2	12	11	33	1	41	14	35	64.5	60.5
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	0	18	0	6	5	15	17	53	7	49	12	8	61.5	54.0
6	Այլ	0	6	0	10	6	17	9	13	7	18	2	9	57.0	52.5
	Ընդամենը	0	311	24	484	90	513	249	733	259	580	199	301	61.5	51.0

Ասպիրանտների բաշխումն ըստ սեռի (2007թ.)

Առկա ուսուցմամբ ասպիրանտների բաշխումը ըստ սեռի

	Արական	Իգական	Ընդամենը
I կուրս	155	14	169
II կուրս	184	13	197
III կուրս	239	14	253
Ընդամենը	578	41	619
%	93%	7%	1238

Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների բաշխումը ըստ սեռի

	Անվճար		Վճարովի		Ընդամենը
	Արական	Իգական	Արական	Իգական	
I կուրս	51	97	43	32	381
II կուրս	59	108	22	52	423
III կուրս	46	112	16	40	370
IV կուրս	39	77	16	26	266
Ընդամենը	317	643	191	289	1440
%	33%	67%	40%	60%	2880


Ասպիրանտների բաշխումն ըստ գիտության ճյուղերի (2007թ.)

№/հ	Մասնագիտություն	Առաջին կուրս						Երկրորդ կուրս						Երրորդ կուրս						Չորրորդ կուրս			
		առկա		հնռակա անվճար		հնռակա վճարովի		առկա		հնռակա անվճար		հնռակա վճարովի		առկա		հնռակա անվճար		հնռակա վճարովի		հնռակա անվճար		հնռակա վճարովի	
		ար	իգ	ար	իգ	ար	իգ	ար	իգ	ար	իգ	ար	իգ	ար	իգ	ար	իգ	ար	իգ	ար	իգ	ար	իգ
1	Մաթեմատիկա, մեխանիկա, ինֆորմատիկա	11	0	4	1	0	0	9	0	1	3	0	0	11	0	0	4	0	0	1	3	0	0
2	Ֆիզիկա	15	1	0	11	0	2	18	0	4	3	0	0	26	0	2	1	0	0	0	2	0	0
3	Տեխնիկական գիտ.	43	4	11	22	6	1	34	3	12	15	0	1	58	2	8	11	3	0	2	6	1	1
4	Քիմիական գիտ.	0	0	0	1	0	0	1	0	0	0	0	2	4	0	2	4	0	1	2	4	0	0
5	Կենսաբանական գիտ.	3	0	1	5	0	0	6	1	1	3	0	1	5	0	2	6	0	0	0	10	0	0
6	Երկրի մասին գիտ.	1	0	0	0	1	0	7	0	0	1	0	0	7	1	3	1	1	0	3	0	0	0
7	Հայագիտություն	15	2	9	24	2	4	16	3	10	27	1	2	22	1	6	29	0	2	7	17	0	0
8	Հասարակագիտություն	54	4	22	24	13	20	70	5	23	40	19	38	77	6	19	40	8	30	18	21	12	22
9	Մանկավարժ. գիտ.	2	0	0	4	0	2	4	0	0	6	1	7	6	0	0	3	1	1	1	2	0	0
10	Քաղաքաշինություն, ճարտարապետություն, շինարարություն	1	1	1	0	0	0	2	0	2	0	0	0	0	0	1	4	0	0	0	6	0	0
11	Բժշկական գիտ.	6	2	2	3	0	0	12	1	3	5	0	0	16	2	2	4	1	1	4	4	0	0
12	Գյուղատնտ. գիտ.	4	0	0	2	21	3	5	0	3	5	1	1	7	2	1	5	2	5	1	2	3	3
	Ընդամենը	155	14	50	97	43	32	184	13	59	108	22	52	239	14	46	112	16	40	39	77	16	26

Ասպիրանտների բաշխումն ըստ գերատեսչությունների (2007թ.)

Տ/հ	գ ե ր ա տ է ս չ ո ւ թ յ ո ւ ն ը	Ընդամենը						Ընդամենը	որից արակ.	որից. իզակ.
		առկա		հեռակա անվճար		հեռակա վճարովի				
		ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.			
1	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	449	36	127	304	73	138	1127	649	478
2	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	93	5	37	64	24	9	232	154	78
3	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	4	0	3	2	0	2	11	7	4
4	ՀՀ առողջապահության նախարարություն	10	0	11	14	0	0	35	21	14
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	21	0	8	9	0	1	39	29	10
6	ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն	1	0	0	0	0	0	1	1	0
7	ՀՀ ոստիկանություն	0	0	9	1	0	0	10	9	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	578	41	195	394	97	150	1455	870	585

2008 թվականի դրությամբ ՀՀ-ում սովորող ասպիրանտների բաշխումն ըստ գերատեսչությունների



- ՀՀ ԿԳՆ
- ՀՀ ԳՄԱ
- ՀՀ Գյուղ. նախ.
- ՀՀ Առողջապահ. նախ.
- ՀՀ Էկոնոմիկայի նախ.
- ՀՀ Էներգ. և բնական պաշ. նախ.
- ՀՀ Ոստիկանություն

ՀՀ ԿԳՆ և ՀՀ ԳՄԱ համակարգում սովորում է ասպիրանտների 93%-ից ավելին

2007թ. թեկնածուական ատենախոսություն պաշտպանածների թվաքանակն ըստ բնագավառների

Հ/հ	Բնագավառը	Թվաքանակ	Տոկոսը ընդհանուրի մեջ, %
1	Մաթեմատիկա, մեխանիկա, ինֆորմատիկա	30	6.3
2	Ֆիզիկա	24	5.1
3	Տեխնիկական գիտություններ	45	9.5
4	Քիմիական գիտություններ	13	2.7
5	Կենսաբանական գիտություններ	26	5.5
6	Երկրաբանական, աշխարհագրական գիտություններ	3	0.6
7	Հայագիտություն	89	18.7
8	Հասարակական գիտություններ	148	31.2
9	Մանկավարժական գիտություններ	32	6.7
10	Ճարտարապետություն	6	1.3
11	Բժշկական գիտություններ	49	10.3
12	Գյուղատնտեսական գիտություններ	10	2.1
	Ընդամենը	475	

Գիտական ամսագրերում հրատարակումները ըստ գերատեսչությունների

2005-2007թթ

Հ/հ	Գերատեսչությանը	2005			2006			2007		
		հրատարակված հոդվածների քանակը	որոնցից գրախոսվող	%	հրատարակված հոդվածների քանակը	որոնցից գրախոսվող	%	հրատարակված հոդվածների քանակը	որոնցից գրախոսվող	%
1	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	1660	1283	77	1783	1212	68	2059	1524	74
2	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	5834	3217	55	5772	3236	56	6365	3604	57
3	ՀՀ առողջապահության նախարարություն	166	46	28	214	74	35	161	44	27
4	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	174	153	88	207	190	92	168	151	89
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	267	263	99	275	249	91	210	206	98
6	Այլ	104	23	22	143	25	17	125	40	32
	Ընդամենը	8205	4985	61	8394	4986	59	9088	5569	61

Գիտական պարբերականներում և ժողովածուներում հրատարակումները

	Ընդամենը հոդվածներ	Որոնցից գրախոսվող	Միջազգային գիտ.պարբերականներում հրատարակված հոդվածների հարաբերությունը ընդհանուրին (%)
		2005թ.	
ՀՀ	5613	3228	12,5
ԱՊՀ	1208	739	
Միջազգային	1384	1024	
Ընդամենը	8205	4991	
		2006թ.	
	Ընդամենը հոդվածներ	Որոնցից գրախոսվող	%
ՀՀ	5678	3107	12,6
ԱՊՀ	1486	821	
Միջազգային	1230	1058	
Ընդամենը	8394	4986	
		2007թ.	
	Ընդամենը հոդվածներ	Որոնցից գրախոսվող	%
ՀՀ	6227	3643	11,9
ԱՊՀ	1333	837	
Միջազգային	1528	1089	
Ընդամենը	9088	5569	

Տեղեկություններ գիտական կազմակերպությունների ինովացիոն գործունեության մասին

2005-2007թ.թ.

Հ/հ	Փերատեսչությունը	Գյուտեր, հեղինակային իրավունքներ	Արտադրական նմուշների համար ստացված վկայագրեր	Մոդելային նմուշների համար ստացված վկայագրեր	Հեղինակային իրավունքի ուժի մեջ պահպանված վկայագրեր	Լիցենզիոն գործունեությունից ստացված եկամուտներ (հազ. դրամ)
1	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	34	7	5	42	14000
2	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	168		1	77	14353.4
3	ՀՀ առողջապահության նախարարություն	12			9	
4	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	45	1		75	
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	8	6			
6	այլ					83913.7
	Ընդամենը	267	14	6	203	112267.1

Միջազգային համագործակցություն 2005-2007թթ.

Մասնակցությունը գիտական կոնֆերանսներին, սիմպոզիումներին, ցուցահանդեսներին

Հ/հ	Գերատեսչությունը	Գիտական կոնֆերանսներ և սիմպոզիումներ				Ցուցահանդեսներ			
		2005	2006	2007	Ընդամենը	2005	2006	2007	Ընդամենը
1	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	556	692	922	2170	20	19	32	71
2	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	1025	1142	1360	3527	115	109	117	341
3	ՀՀ առողջապահության նախարարություն	42	40	48	130				
4	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	39	37	36	112	1	3	1	5
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	38	79	54	171	5	6	3	14
6	Այլ	46	35	46	127	0	3	1	4
	Ընդամենը	1746	2025	2466	6237	141	140	154	435

**Գիտական և գիտատեխնիկական գործունեության համար ստացված մրցանակները
2005-2007թթ.**

	Գերատեսչությունը	2005	2006	2007	2005	2006	2007	2005	2006	2007
1	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	3	0	0	2	1	1	3	3	5
2	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	13	13	4	7	4	4	15	13	15
3	ՀՀ առողջապահության նախարարություն	-	-	-	2	-	1	1	-	-
4	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	-	-	-	-	-	-	1	-	1
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	-	-	-	-	10	-	1	-	-
6	Այլ	0	0	0	0	0	0	1	1	0
	ԸՆԴԱՄԵՆԸ	16	13	4	11	15	6	22	17	21

1. ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների մեծ մասը (շուրջ 65%) ՊՈԱԿ-ներ են: Հաշվի առնելով ՊՈԱԿ-ների գործունեության օրենսդրական և կանոնադրական առանձնահատկությունները և նկատի ունենալով գիտական արդյունքի առևտրայնացման արդի պահանջները՝ կարծում ենք՝ նրանց կարգավիճակների հստակեցման անհրաժեշտություն կա:
2. ՀՀ –ում գործում են ավելի քան 120 գիտահետազոտական ինստիտուտներ, գիտական կենտրոններ, բուհական հետազոտական լաբորատորիաներ և գիտական խմբեր: Նրանց զգալի մասն զբաղվում են իրար բավականին մոտ գիտական խնդիրներով: Հայաստանի համար գիտական հիմնարկների մեծ թիվը, մի շարք գիտական հիմնարկների գործունեության ոլորտների նմանատիպ լինելը, ֆինանսավորման ներկայիս ձևերը չեն նպաստում այդ հիմնարկների բնականոն առաջընթացին: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է գիտական հիմնարկների ինչպես կազմակերպարավական կարգավիճակների վերանայում, այնպես էլ այդ հիմնարկների օպտիմալացման իրականացում:
3. ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների գերակշիռ մասը տեղակայված է Երևանում (կազմակերպությունների մոտ 78%-ը), որը չի նպաստում ՀՀ այլ մարզերում գիտական հետազոտությունների բնականոն զարգացմանը:
4. Այսօրվա գործող կարգով պայմանագրային թեմաների ֆինանսավորումը չի նպաստում հետազոտությունների մրցունակության ապահովմանը, միջազգային համագործակցության խթանմանը, մեկ թեմայի մեջ հաստիքների, տնտեսական և այլ ծախսերի ավելացմանը, նյութատեխնիկական բազայի և այլ պայմանների բարելավմանը: Դեռևս չի կայացել անկախ փորձագիտական նոր համակարգի ստեղծումը, որի գործառույթներով էլ հենց պայմանավորված է լինելու վերոհիշյալ բարեփոխումների իրականացումը: Պայմանագրային թեմաների զգալի մասը իրենց բովանդակային պարունակությամբ կրկնում են գիտական հիմնարկներում իրականացվող բազային ծրագրերը: Փաստորեն տեղի է ունենում նույնատիպ ծրագրերի կրկնակի ֆինանսավորում, որը բերում է առանց այն էլ սուղ միջոցների փոշիացմանը: Անհրաժեշտ է անցնել իրական դրամաշնորհային համակարգի, որտեղ ծրագրերի հետագա իրագործումը կորոշվի անկախ փորձագետների եզրակացության հիման վրա: Անհրաժեշտ է նաև հստակեցնել դրամաշնորհային ծրագրերի իրավական գործառույթները և պետության կողմից ֆինանսական աջակցության մասնաբաժինը:
5. Բյուջետային ֆինանսավորման մեջ աշխատավարձերի, տնտեսական ու այլ ծախսերի միջև առաջացել են անթույլատրելի անհամամասնություններ: Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնելու համար ընդհանուր ծախսերի մեջ տնտեսական և այլ ծախսերի չնչին ծավալները չեն նպաստում գիտական ծրագրերի հաջող իրականացմանը: Գիտության պետական կոմիտեի 2009 – 2012 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է բազային ֆինանսավորումից բացի իրականացնել

նան ռեալ դրամաշնորհային ֆինանսավորում: Ծրագրերի գերակշիռ մեծամասնությունը (ինչպես բազային, այնպես է դրամաշնորհային) պետք է կրեն կիրառական բնույթ և բխեն մեր տնտեսության և գիտության զարգացման գերակայություններից:

6. Բազային և թեմատիկ ծրագրերի բովանդակային կրկնություններից խուսափելու նպատակով՝ դրամաշնորհային թեմաների թիվը անհրաժեշտ է կրճատել և հասցնել մինչև 300-ի, որում անհրաժեշտ է էապես ավելացնել տնտեսական և այլ ծախսերը: ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն պլանավորում է մինչև 2012 թ. մեկ հաստիքի կտրվածքով աշխատավարձի ֆոնդը այսօրվա 87%-ից հասցնել մինչև 55-60%, ինչը պետք է հնարավորություն տա ավելացնելու տնտեսական և այլ ծախսերը: Այն կնպաստի գիտական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի, աշխատանքային և սոցիալական պայմանների բարելավմանը:
7. Վերջին 3-4 տարիների ընթացքում զգալիորեն նվազել են միջազգային դրամաշնորհները: Նման օրինաչափություն նկատվում է նաև ԱՊՀ երկրներում: Բանը նրանում է, որ մինչև 2005 թ. միջազգային դրամաշնորհները հիմնականում կրում էին բարեգործական բնույթ: Այժմ միջազգային դրամատու կազմակերպությունները հակված են ֆինանսավորելու գործընկերային ծրագրեր, որոնք կրում են հիմնականում համաֆինանսավորման բնույթ: Հատկապես խրախուսվում են կիրառական բնույթ ունեցող ծրագրերը, որոնք մեծ հավանականությամբ կարող են դառնալ ամենաարդյունավետն ենթակա արդյունք:
8. ՀՀ գիտական հիմնարկներում ամերիկյան գիտական սարքավորումների մեծ մասը բարոյապես և ֆիզիկապես հնացած է: Նման պարագայում անհնար է ակնկալել լուրջ կիրառական արդյունքներ: Հատկապես վատ է վիճակը ՀՀ ԳԱԱ համակարգում գտնվող հիմնարկներում: ՀՀ ԳԱԱ համակարգում են կենտրոնացված հատկապես բարձր վարկանիշ ունեցող գիտնականների զգալի մասը և անորակ նյութատեխնիկական բազան հնարավորություն չի տալիս հիշյալ գիտնականներին օգտագործելու իրենց գիտական կարողությունները ամբողջությամբ: Ակնհայտ է, որ ՀՀ գիտական հիմնարկներում խիստ հրատապ խնդիր է դարձել նյութատեխնիկական բազայի արդիականացմանը միտված ծրագրերի իրականացումը: Այս ծրագրերը կարող են արդյունավետ գործել միայն հիմնարկների համատեղ գիտակրթական կենտրոններ ստեղծելու ճանապարհով:
9. ՀՀ գիտական հիմնարկներում աշխատող գիտությունների թեկնածուների միջին տարիքը 51 է, իսկ գիտությունների դոկտորներինը՝ 61,5 (հատկապես վատ է վիճակը գյուղատնտեսության ոլորտում աշխատող գիտնականների դեպքում՝ համապատասխանաբար 60,5 և 64,5 տարեկան): Գիտական աստիճան ունեցող աշխատակիցների փաստացի ծերացման հիմնական պատճառը 30-40 տարեկան տարիքային խմբում գիտության մեջ ընդգրկված երիտասարդ գիտաշխատողների փոքր թիվն է: Այս տարիքային խմբի գիտական կոչում ունեցող մարդիկ գերադասում են աշխատել ավելի բարձր աշխատավարձ ապահովող այլ ոլորտներում: Այս օրինաչափությունը շարունակվելու պարագայում 10-15 տարի հետո որակյալ գիտական մարդկային ռեսուրսները կսպառվեն և մենք կկորցնենք շատ գիտական դպրոցներ, էապես կտուժեն բուհերը: Յուրաքանչյուր նոր գիտական դպրոցի կայացում տևում է 15-20 տարի: Նոր գիտական դպրոցների և որակյալ բուհական կադրերի պակասը վերականգնելու համար կպահանջվեն ահռելի ներդրումներ և երկար տարիների աշխատանք:

10. Առկա ուսուցման ասպիրանտների մեջ գերակշիռ առավելություն ունեն տղաները (93%): Հակառակ է պատկերը հեռակա ուսուցման դեպքում: Երիտասարդ տարիքային խմբում գտնվող գիտությամբ զբաղվող արական սեռի գիտնականների փոքր թիվը և առկա ուսուցմամբ սովորող արական սեռի ասպիրանտների մեծ թվերի միջև եղած հակասությունը խոսում է այն մասին, որ
- առկա ուսուցմամբ ասպիրանտուրան օգտագործվում է բանակից խուսափելու համար,
 - գիտության մեջ ընգրկված մարդկանց ցածր աշխատավարձերը (հատկապես արական սեռի ներկայացուցիչների համար) դարձնում են գիտությամբ զբաղվելը անհրապուրիչ,
 - ասպիրանտական ուսուցման կազմակերպման գործընթացում ՀՀ-ում առկա է ակնհայտ գենդերային խտրականություն:
11. Առավել շատ ասպիրանտական տեղեր հատկացվում են հասարակագիտական և տեխնիկական գիտություններին, մինչդեռ բավականին քիչ տեղեր են տրամադրվում բնական գիտություններին (մաթեմատիկա, մեխանիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և երկրի մասին գիտություններ), որոնք երկրի տնտեսության զարգացման մեջ մեծ տեղ և դեր կարող են ունենալ: Համեմատելով այս սովյալները գծանկար 3-ում ներկայացված թեկնածուների ճյուղային բաշխման հետ՝ հասկանալի է դառնում, որ հասարակական գիտությունների բնագավառում գիտական թեզեր պաշտպանածներից անհամեմատ քչերն են հետագայում զբաղվում գիտությամբ, քան բնական գիտությունների ասպարեզում պաշտպանածները: Այսինքն ասպիրանտական տեղերը բաշխվում են հախուռն, առանց շուկայի առաջարկ-պահանջարկը հաշվի առնելու:
- Անհրաժեշտ է հնարավորինս արագ կատարելագործել ասպիրանտական տեղերի պետական պատվերի ձևավորման խաղի կանոնները:
12. ՀՀ-ում տպագրվում են զգալի քանակությամբ գիտական հոդվածներ: Սակայն, համեմատելով գրախոսվող ամսագրերում և միջազգային գրախոսվող պարբերականներում հրատարակված գիտական աշխատանքների համեմատական սովյալները, տեսնում ենք, որ հոդվածների միայն 12-13%-ն է տպագրվում միջազգային գիտական պարբերականներում, որը անշուշտ շատ փոքր թիվ է: Դա վկայում է մեր գիտական արդյունքների ցածր մրցունակ լինելը:
13. Անսպասելի մեծ թիվ է կազմում ԿԳՆ ենթակայության հիմնարկներում տպագրված մենագրությունների, ուսումնասիրողական ձեռնարկների և գրքերի քանակը: Ուռճացված թվերի պատճառ կարող են լինել, այսպես կոչված, ինքնահրատարակումները, որոնց որակը սովորաբար շատ ցածր է: Այս է պատճառը, որը միջազգային գիտատեղեկատվական ցանցերում Հայաստանում հրատարակվող ամսագրերի անվանացանկը բացակայում է: Հայաստանում շատ ցածր մակարդակի վրա են գիտական բիրլիոգրաֆիկ ծառայությունները:
14. Գիտական հիմնարկներում ինովացիոն բնույթ կրող արդյունքների կիրառման հստակ քաղաքանություն չի իրականացվել: Հավանաբար, հիմնական պատճառներից մեկը գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների՝ նման գործունեությամբ զբաղվելու պատրաստ չլինելն է, պետության և մասնավոր ներդրողների համապատասխան գիտության ոլորտում ներդրումներ կատարելուն հետաքրքրված չլինելը և, ընդհանրապես, այս հարցում պետության ոչ սկզբունքային քաղաքականությունը: Այս գործընթացները խթանելու համար անհրաժեշտ է ինովացիոն

գործունեության հստակ պետական քաղաքականության մշակումը, որը կնպաստի ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կապիտալի ներհոսքին այս ոլորտ:

15. Արդի գիտության մեջ առավել ընդգրկվածություն ապահովելու համար անհրաժեշտ է խթանել միջազգային գիտական համագործակցությունը: Այսօրվա ունեցած ֆինանսական միջոցները տեսականորեն հնարավորություն չեն տալիս գիտական կազմակերպություններին հաստատելու լայնածավալ միջազգային գիտական կապեր: Այս խնդիրը կարող է լուծվել գիտական կազմակերպությունների տնտեսական և այլ ծախսերի (գործուղումներ, այլ ներկայացուցչական ծախսեր) կտրուկ մեծացումով: Միջազգային համագործակցության խթանումը էապես կնպաստի նաև գիտական արդյունքների առևտրայնացմանը միտված գործունեության խթանմանը, ինչպես նաև ՀՀ գիտական կազմակերպությունների միջազգային գիտակրթական տարածք ինտեգրմանը: